ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

01/3614-10 15 10 10

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ՝
Պարոն Ա. Դանիելյանին

Հարգելի պարոն Դանիելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի հրատապ հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պարզաբանումները:

Առդիր՝ «1» թերթ

Հարգանքով՝ *Գ. Դանիելյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 540/4-2765
«11» 10 2010 թ.

ՀՀ Արդարադատության նախարար
պարոն Գ. Դանիելյանին

Հարգելի պարոն՝ Դանիելյան

Հասարակական դիտորդների խմբի 18.09.2010թ-ի 10-21 թվակիր հրատապ հաշվետվության վերաբերյալ հայտնվում է, որ 17.09.2010թ-ին հասարակական դիտորդների խմբի անդամներ Միքայել Արամյանի և Արման Դանիելյանի այցելությունը «Կոշ» քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտի հնարավոր չի եղել ապահովել այն պատճառով, որ նրանք այցելել են քրեակատարողական հիմնարկ ոչ թե ժամը 21-45-ին այլ 22-00-ից հետո, երբ քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահի ժամանակավոր պաշտոնակատար Ֆահրադ Մարտիրոսյանը զբաղված է եղել քրեակատարողական հիմնարկում դատապարտյալներին քուն հայտարարելու միջոցառման աշխատանքներով, բացի այդ մի խումբ դատապարտյալների այդ թվում դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի միջանձնային հարաբերությունների կարգավորմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներով և բավարար ուժեր չի ունեցել քրեակատարողական հիմնարկ՝ այցելած դիտորդների խմբին հիմնարկի բնակելի գոտի ուղեկցելու և նրանց անվտանգությունը ապահովելու համար:
«Կոշ» քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահի ժամանակավոր պաշտոնակատար Ֆ. Մարտիրոսյանը տվյալ իրավիճակում գործել է ճիշտ:

Հարգանքով՝

Գեներալ - Գնդապետ Հ. Հարությունյան

4218
11 10 2010